

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

1901 թ. 19 փետր. Ն.-Ձուղա

«Մուրն» ամսագրի յունուարի համարում, սպուած էր Պարսկաստանից մի լուր—քէ եւ արտաքին գործոց նախարարի (Միւշիւր-Դօվլէ) հետ ունեցած տեսակցութեան ժամանակ բարոյքել եմ, քէ ինչպէս Ն.-Ձուղայի դպրոցական կարուածի՝ Զիգան գիւղը յափճակող պարսիկը, ըստ իր ասութեան, կաշառելով մի բարձաստիճան անձի, արգելք է լինում դասի յաջող լուծուելուն, եւ որ այդ ժամանակ, իբր քէ, ինձ ասել է նախարարը. «Դա մեր մէջ ընդունուած սովորութիւն է դարձել»:

Պարսք եմ համարում յայտնել հրապարակաւ, որ այդ լուրը միանգամայն անհիմն է. այդպիսի մի խօսակցութիւն եւ երբէք չեմ ունեցել Նորին Վսեմութեան հետ: Ընդհակառակն, ունենալով գործ Նորին Վսեմութիւն Միւշիւր Դօվլէի՝ հետ Զիգանի կարուածական խնդրի առթիւ, եւ միմիայն կարող եմ իմ անկեղծ գոհունակութիւնս ու շնորհակալութիւնս յայտնել Նորին Վսեմութեան, որ նա իմ բոլոր դիմումներին գոհացումըն է տուել՝ պաշտպանելով ամենայն արդարութեամբ վանքի կարուածական դասը:

ԽՈՐԷՆ Վարդապետ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ